Հավելված N 3
ՀՀ կառավարության 2023 թվականի
դեկտեմբերի 14-ի N 2207 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՋՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՌՑԱՆՑ ՓՈԽԱՆՑՄԱՄԲ ՋՐԱՀԱՇՎԻՉ (ՋՐԱՉԱՓԻՉ) ՍԱՐՔԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են մակերևութային, ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործված և արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով ջրաչափիչ սարքերի շահագործման հետ կապված հարաբերությունները:

2. Ջրաչափիչ սարքի հեռավար տվյալների փոխանցման գործընթացը պետք է ապահովվի բջջային օպերատորի սիմ-քարտի օգտագործման մոդուլի միջոցով:

3. Մակերևութային ջրերի օգտագործված պաշարների և ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի տվյալները հաշվառվում, պահպանվում և արխիվացվում են հարթակում: Հարթակի սպասարկումը և վարումն իրականացնում է ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

4. Հարթակը նախատեսված է ջրաչափիչ սարքերի մոնիթորինգի, ջրի հոսքի և քանակի վերաբերյալ տվյալների հավաքագրման, փոխանցման, մշակման, ցուցադրման և արխիվացման համար:

5. Հարթակում ներառված տվյալներն ամփոփվում են ջրային պետական կադաստրում:

6. Ջրառի կետի տեղադիրքից կախված՝ էլեկտրական էներգիայի բացակայության դեպքում, ջրօգտագործողը պարտավոր է ջրաչափիչ սարքը կահավորել

մարտկոցով կամ ֆոտովոլտային աղբյուրներով սնուցվող հեռակա տերմինալներով: Հեռակա տերմինալներից տվյալները ավտոմատ կերպով հաղորդվում են լիազոր մարմնի կողմից նախապես կարգավորված օգտագործողի սերվերին կամ դիէյջէս (DHS) ամպային համակարգին առնվազն հինգ րոպե պարբերականությամբ:

7. Ջրաչափիչ սարքի տագնապային ազդանշանի, սարքի խափանման, վթարների, էլեկտրական էներգիայի բացակայության, ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված ջրի չափաքանակներից ավելի ջրառ իրականացնելու դեպքերում ջրօգտագործողի բջջային հեռախոսահամարին և/կամ էլեկտրոնային փոստին ուղարկվում է ծանուցում և/կամ կարճ հաղորդագրություն: Կարճ հաղորդագրության և/կամ էլեկտրոնային փոստին ծանուցումից հետո ջրօգտագործողը մեկ աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմնին գրությամբ տեղեկացնում է խափանման կամ վթարի պատճառները և դրանց վերացման կամ վերականգման ժամկետը: Ջրաչափիչ սարքի աշխատանքի վերականգման դեպքում ջրօգտագործողը տեղեկացնում է լիազոր մարմին: Ջրաչափիչ սարքի խափանումը, վթարը չվերացնելն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ